



Ծրագրի անվանումը

Գյուղական շրջանների զարգացումը Մեդրիի տարածաշրջանում (փուլ II)

Ընդհանուր տեղեկություններ

Տարածաշրջանը. Մեդրի (Հայաստան)
Տևողությունը. 2012 թ. դեկտեմբերից մինչև 2016 թ. նոյեմբեր
Բյուջեն. 3 580 000 շվեյցարական ֆրանկ

Ծրագրի գործընկերները

- Իրականացնող գործընկերը. *INTERCOOPERATION, Ջարգացման և միջազգային համագործակցության շվեյցարական հիմնադրամ*
- Ենթակապալառու. Հայաստանում. *CARD հիմնադրամ*
- Ինստիտուցիոնալ գործընկերը. *Տարածքային կառավարման նախարարությունը և ՀՀ Սյունիքի մարզպետարանը*

Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է, արտադրության բարձր շահութաբերության և շուկաների ընդլայնված հասանելիության միջոցով, հասնել այն բանին, որ այգեգործական փոքր արտադրողներն ունենան ավելացված և կայուն եկամուտներ (թուզի, արքայանարինջի և նուռի արժեշղթաները):

Նախապատմությունը

Սյունիքի մարզը համարվում է Հայաստանի ամենախոցելի մարզերից մեկը՝ իր ծայրահեղ հեռավորության, վատ ճանապարհների և անբարենպաստ կլիմայական պայմանների պատճառով, որի պատճառը մարզի բարձր լեռնային լինելն է: Գյուղատնտեսությունը և սննդի վերամշակումը միշտ էլ եղել են այս տարածաշրջանի տնտեսական հիմնական հիմքը: Սյունիքի մարզի գյուղերի ֆերմերները հիմնականում վարում են բնամթերային գյուղատնտեսություն և դեպի շուկաներն ունեն սահմանափակ հասանելիություն: Մեդրիի տարածաշրջանն իր երկու քաղաքներում և տասներկու գյուղական համայնքներում բնակվող 12 000 բնակչությամբ համարվում է համեմատաբար փոքր տարածաշրջան: Գործազրկության մակարդակը Մեդրիի տարածաշրջանում երկու անգամ բարձր է երկրի միևնույն միջին ցուցանիշից, ընդ որում կանանց գործազրկությունը կազմում է ավելի քան 70%: Լուրջ խնդիր է համարվում բնակչության ծերացումը, եթե հաշվի առնենք նաև այն փաստը, որ բնակչության 20%-ը թոշակառուներ են: Բնամթերային գյուղատնտեսությունը հանդիսանում է գոյատևման գրեթե միակ աղբյուրը: Այգեգործությունը հիմնական եկամտի աղբյուրն է Մեդրիում:

Ծրագրի գործողությունները

Ծրագիրը հիմնականում ներգրավված կլինի կարողությունների զարգացման գործընթացներում, որի շահառուները կլինեն այգեգործական արտադրողները և շուկայի այլ մասնակիցները, ինչպես նաև կուժեղացնի շուկայի մասնակիցների միջև կապերը, որպեսզի բարելավվի համապատասխան ծառայությունների և շուկայական տեղեկատվության հասանելիությունը: Ծրագիրն անմիջապես կաշխատի 1՝800 այգեգործ ֆերմերների և նրանց ընտանիքների հետ, ինչպես նաև Մեդրիի տարածաշրջանի թվով 9 տնկարանների հետ և սերտորեն կհամագործակցի համապատասխան տարբեր միությունների և ծառայություններ մատուցողների հետ: Հատուկ ուշադրություն կդարձվի վերամշակման ծառայությունների ավելացման վրա և թարմ միրգը շուկաներ փոխադրող միջնորդների դերի կարևորության վրա:

Ծրագրի արդյունքները

Սպասվող արդյունքներն են.

- Ծառայություն մատուցողները և օժանդակ նյութեր ու պարագաներ մատակարարողները կին և տղամարդ ֆերմերներին տրամադրում են գյուղատնտեսական ժամանակակից տեղեկատվության և օժանդակ նյութերի ու պարագաների նկատմամբ ավելի լավ հասանելիություն:
- Ֆինանսական ծառայություններ մատուցողները կին և տղամարդ ֆերմերներին, վերամշակողներին և այգեգործական շուկայի այլ մասնակիցներին տրամադրում են ավելի լավ և տեղայնացված ծառայություններ, ինչպես նաև բարելավում են ներդրումներ իրականացնելու համար կապիտալի հասանելիությունը:
- Ֆերմերների և գնորդների միջև բարելավված առևտրային կապերը (վերամշակողներ, առևտրականներ, մանրածախ առևտրականներ, արտահանողներ) թույլ են տալիս մուտք գործել բարձրարժեք շուկաներ:
- Տեղական իշխանությունները (համայնքային և մարզային իշխանությունները) ընդունում և իրականացնում են ավելի նպաստավոր գործարար միջավայրի ստեղծման ռազմավարությունը, որպեսզի պետական-մասնավոր գործընկերությամբ խթանվեն ներդրումները այգեգործության մեջ:



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Cooperation Office
South Caucasus

Swiss Cooperation Office South Caucasus
Embassy of Switzerland

Melik-Adamyants Street 2/1, Yerevan, Armenia
Phone (+374 10) 52 40 88; (+374 10) 52 98 60
Fax: (+374 10) 52 98 61
E-mail: yerevan@sdc.am
Web-page: www.swisscoop.am